տուն որեւէ ցուցում կամ ակնարկ»:

Թւում է, թէ տարաժամ է յիշել մատենագրական աղբիւրներ, երբ երեւակայութիւնը տապալել է բանասիրութեան բոլոր պատնէշները:

III

Ուրիշ երկու դիւտ եւս արել է պ. Մանանդեան, 'Հող երդոյ եւ վիճակ' տեքնիկ տերմինները:

Ագաթանգեղի ասելով Տրդատը եկեղեցուն հող բաշխեց: Փաւստոս վկայում է որ Պապ թագաւորը եկեղեցական հողերի մեծագոյն մասը կտրեց:

Համեմատելով երկու մատենագիրների վկայութիւնը, գտնում է որ սրանք միմեանցից անկախ են այս կէտում եւ որ նրանց տեղեկութիւնը հաւաստի է եւ ստոյգ եւ որ Ագաթանգեղի վկայութիւնը, որ աւելի լրիւ է, համարելու է նաեւ աւելի ուղիղ:

Երբ պ. Մանանդեան մի բան է ուզում ապացուցանել, խոչընդոտ չի տեսնում իր առջեւ: Ասել որ երկու մատենագիրները անկախ են միմեանցից, կասկածելի է. ասել որ Ագաթանգեղն աւելի ուղղախօս է քան Փաւստոսը, եւս առաւել կասկածելի. եւ պնդել, որ նրանց տեղեկութիւնը պէտք է ընդունել իբրեւ ստոյգ, անզգուշութիւն է:

Երբ Ագաթանգեղոս եւ Փաւստոս բախւում են եւ կանգնած են դատի առաջ, Փաւստոսն է միշտ արդարը եւ Ագաթանգեղոս ամբաստանեալ եւ որքան «ընդարձակ» ճառ է, նոյնքան մեղաւոր է:

Այս կէտում Ագաթանգեղոսի աղբիւրը եւ ներշնչողը Փաւստոսն է:

Պատմականօրէն անընդունելի է որ Լուսաւորիչ կարենար եկեղեցիներ շինել «յամենայն աշխարհս, ի գաւառս, ի կողմանս, ի քաղաքս, յաւանս, ի շէնս, ի գիւղս եւ յագարակս». լոկ բառեր են, ճարտասանութիւն, զուրկ իրական բովանդակութիւնից: Հազար հինգ հարիւր տարի անցնելուց յետոյ էլ Հայաստանում կան գիւղեր, որ եկեղեցի չունին տակաւին:

Բնաւ հաւաստի չի կարելի համարել որ Տրդատ բոլոր եկեղեցիներին չորս չորս հող երդոյ տար ագարակներում, եւ եօթն եօթն՝ աւաններում: Հայ եկեղեցու հիմնադիրը առաջին քրիստոնեայ տաճարները կանգնեց հին սրբավայրերի աւերակների վրայ: Բաւական էր, որ նրանց գոյքը հասնէր եկեղեցիներին, եւ նոր հողեր տալու պէտք չէր ունենայ բարեպաշտ թագաւորը:

Այս տեղեկութիւնը Լուսաւորչի կենսագիրը պարտական է Փաւստոսին:

Պապ թագաւորին սեւացնելու նպատակով, ինչպէս եւ Ներսէսին գովաբանելու, Փաւստոսը դիմում է Տրդատի հեղինակութեան: Պապը «յեւթն հողոյն զհինգն հատանէր յարքունիս, ասում է Փաւստոս, եւ զերկուսն միայն թողոյր երկուս հողս եւ ըստ հողոյն թողոյր երկուս երկուս առ գիւղ մի երէց եւ սարկաւագ եւ զայն ի սպասու կացուցանէր յիւր ի ծառայութեան 'ունելով?' զեղբարս եւ զորդիս երիցանցն եւ սարկաւագացն»:

Ի՞նչ է այս եօթն կամ հինգն կամ երկու հողը:

Հայոց լեզուի մէջ հողաչափութեան յատուկ բառեր կան, օր. արդու, դրիւ, օրավար, լուծ, կորի, որ պատմագիրը կարող էր գործածել տարտամ դարձուածքից խուսափելու համար: Հեղինակը դերադասել է անորոշութիւնը:

Ագաթանգեղոս աւելացնում է 'երդոյ' բառը.» «չորս հողս երդոյ», «եօթն հողս երդոյ»: Արդեո՞ք այստու վերանում է անորոշութիւնը:

Պ. Մանանդեան կարծում է որ «հող երդոյ» յատուկ հողաբաժինն է որ դրւում էր «երդերին, այսինքն տներին»:

Դժբախտաբար, լեզուական նրբութիւնները սպրտում են արդոյ բանասէրի աչքից: Եթէ նրա յայտնած միտքը ճշմարիտ լինէր եւ երդ նշանակէր որոշ մակարդակի հող, պէտք էր ասել 'երդ հողոյ', ինչպէս ասում ենք մի տուն հող:

Ոչ մի հիմ չկայ կարծելու, որ երդ ունեցել է նման նշանակութիւն: Երդերը հաւասար եւ որոշակի մեծութիւններ չեն, որ նրանց յատկացրած հողերը հաւասարամեծ լինին:

Սակայն, պ. Մանանդեանի մոլորեցրել է այն հանգամանքը որ յունարէն թարգմանութեան մէջ Ագաթանգեղոսի հող երդոյ դարձրած է arouras. Ասել է թէ հող երդոյ յատուկ հողաբաժին է հաւասար aroura-ի: Բայց յոյն